



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



ՆՈՐՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵՎԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիահույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուսան հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ



Նոր Նորք վարչական շրջանի հարգելի բնակիչներ,

2017 թվականին մեր վարչական շրջանում հաջողությամբ իրականացվեցին մի շարք կարևոր ծրագրեր, շարունակվեցին զարգացման ու բարեկարգման աշխատանքները: Նոր Նորքն իր յուրահատուկ կոլորիտով, բարեկարգ փողոցներով ու կանաչապատ տարածքներով, հիարկե նաև իր սրտացավ և ուշադիր բնակիչներով օրեցօր դառնում է ավելի գրավիչ ու բարեկեցիկ: Այս ամենն իրական է դառնում բոլորիս ջանքերի շնորհիվ, և շատ կարևոր է հետագա տարիներին ևս շարունակել վարչական շրջանի ղեկավարության ու բնակիչների համագործակցությունը՝ նոր հաջողություններ արձանագրելու համար: Յուրաքանչյուր բնակչի պատրաստակամությունն ու մասնակցությունը Նոր Նորքի զարգացմանն ուղղված աշխատանքներին ոչ միայն անհրաժեշտ է, այլև՝ արժեքավոր: Վստահ եմ, որ մեր վարչական շրջանի բնակիչները շարունակելու են իրենց խորհուրդներով և առաջարկություններով մնալ մեր կողքին ու նպաստել Նոր Նորքի հետագա բարգավաճմանը:


Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար
Արմեն Ուլիխանյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում իրականացվել են շինարարական և բարեկարգման լայնածավալ աշխատանքներ:



- ✓ Փողոցների և բակերի ասֆալտապատում՝ շուրջ **95000** քմ:
- ✓ Պուրակների, այգիների, խաղահրապարակների սալիկապատում՝ **1185** քմ:
- ✓ Եզրաքարերի վերանորոգում՝ **500** գծմ:
- ✓ 2017 թվականին վարչական շրջանում կառուցվել է **36** նոր թեքահարթակ:



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՆՊԱՆՈՒՄ


2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում իրականացվել են զգալի աշխատանքներ բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ:

✓ Վարչական շրջանի ծրագրով կատարվել են 77 շենքի **151** մուտքերի, 49 շենքի **9003** քմ հարթ տանիքների, **20** վթարային պատշգամբների ամրացման և վերանորոգման աշխատանքներ, **7** վերելակների վերանորոգման աշխատանքներ:

✓ Համատիրությունների միջոցներով կատարվել են 163 շենքի **8582** քմ հարթ և 208 շենքի **4540** քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ: Վարչական շրջանի և համատիրությունների հետ համատեղ կատարվել է 27 շենքի **1853** քմ թեք տանիքների վերանորոգման, 25 շենքի **720** գծմ ջրթափ խողովակների տեղադրման աշխատանքներ:



Վերանորոգված շքամուտքեր



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում բակային տարածքների բարեկարգման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել:

Վերակառուցվել և բարեկարգվել է 30 բակային տարածք, որտեղ տեղադրվել են մանկական խաղեր, մարզասարքեր, զրուցարաններ և նստարաններ, հիմնանորոգվել և կառուցվել են աստիճանահարթակներ, «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնի տարածքում կառուցվել է մինի ֆուտբոլի դաշտ:



Կառուցվել, վերակառուցվել, բարեկարգվել և նոր տեսք են ստացել մանկական խաղահրապարակները՝

- ✓ 7-րդ զանգվածի 5-րդ շենքի,
- ✓ Վիլնյուսի 41 շենքի,
- ✓ Նանսենի 1-ին նրբանցք 4-րդ շենքի,
- ✓ Գալշոյան 12 շենքի,
- ✓ Գյուլիքեխվյան 29 շենքի,
- ✓ 8-րդ զանգվածի 34 շենքի հարակից տարածքները:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում առաջնահերթ տեղ են զբաղեցրել սոցիալական աջակցության ծրագրերը:

Կազմակերպվել է Նոր Նորք վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների 440 ծնողների այցելությունը զորամասեր:

- ✓ 1041 ընտանիքի ցուցաբերվել է դրամական աջակցություն,
- ✓ 27 ընտանիքի տրամադրվել է հագուստ,
- ✓ 30 ընտանիք ստացել է վառելիքայտ,
- ✓ 625 շահառու օգտվում է 6 բարեգործական ճաշարանից,
- ✓ 22 մանկապարտեզների ավագ խմբերի 1349 երեխա որպես նվեր ստացել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- ✓ Սոցիալապես անապահով ընտանիքների 2-4-րդ դասարանների շուրջ 550, ինչպես նաև՝ սիրիահայ 10 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- ✓ Կազմակերպվել է Նոր Նորքի՝ սոց. անապահով ընտանիքների շուրջ 250 երեխաների հանգիստը բակային ճամբարներում, 100 երեխաների հանգիստը Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում:
- ✓ Ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով շուրջ 1600 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ:
- ✓ Ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով ընտանիքների 5000 երեխաների տրամադրվել են նվեր-փաթեթներ:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ վարչական շրջանի սոցիալապես անապահով 286 ընտանիքի տրամադրվել է աջակցություն (կենցաղային տեխնիկա):



2017 թ. զգալի աշխատանքներ են կատարվել կրթական ծրագրերի ոլորտում:



- ✓ Երևանի 2017թ. շինքարեկարգման ծրագրով հիմնանորոգվել են հ. 109 և հ. 118 մանկապարտեզների տանիքները:
- ✓ Շինանորոգվել և կահավորվել է հ. 114 մանկապարտեզը, վերանորոգվել է հ. 99 մանկապարտեզի ցանկապատը, 2 խմբասենյակ, հ. 101 և հ. 105 մանկապարտեզների երաժշտության դահլիճները, հ. 120 մանկապարտեզի ֆիզկուլտուրայի դահլիճը, հ. 110 մանկապարտեզի բուժկետը և 4 խմբասենյակ, ասֆալտապատվել է հ.119 մանկապարտեզի բակը: Վերանորոգվել և կահավորվել է հ. 101 մանկապարտեզի լոգոպեդի սենյակը, հ. 117 մանկապարտեզի մարզադահլիճը, բուժկետը և այլ աշխատասենյակները:
- ✓ Նոր Նորքի մանկապարտեզները 2017թ. համալրվել են նոր գույքով՝ մանկական աթոռ՝ **755** հատ, մանկական սեղան՝ **150** հատ, եռահարկ մահճակալ՝ **233** հատ, երկհարկանի մահճակալ՝ **296** հատ, մանկական զգեստապահարան՝ **127** հատ:
- ✓ Նոր Նորքի 22 մանկապարտեզներում անվճար հիմունքներով ապահովվել է **4238** երեխայի նախադպրոցական ուսուցումը:
- ✓ Վարչական շրջանի մանկապարտեզներում կազմակերպվել են ծրագրով նախատեսված միջոցառումներ: Կազմակերպվել են Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Հաղթանակի օրվան, Հունիսի 1-ի և Էրեբունի-Երևան-2799 տոնակատարություններին նվիրված զանգվածային միջոցառումներ, որտեղ ընդգրկվել են բոլոր ուսումնական հաստատությունները:

Մանկապարտեզներին հատկացված գույքի քանակ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում իրականացվել են տարաբնույթ մշակութային ծրագրեր:

- ✓ Մշակութային հաստատություններ հաճախող երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում **476** է, Ն. Դանիելյանի անվան արվեստի դպրոցում` **718**, Նոր Նորքի մշակույթի կենտրոնում` **255**:
- ✓ Նոր Նորք վարչական շրջանում կազմակերպվել են պետական տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ, հոբելյանական, գրական-երաժշտական ցերեկույթներ:
- ✓ Նշվել են Ամանորը, Բանակի 25-րդ տարեդարձը, Տեառնընդամաքը, Սուրբ Սարգսի տոնը, Գիրք Նվիրելու, Մայրենի լեզվի միջազգային օրերը, Բուն Բարեկենդանը, Պոեզիայի և Թատրոնի միջազգային օրերը, Հումորի միջազգային օրը, Մայիսյան եռատոնը, Համբարձման տոնը, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, Խաղողօրհները, Գիտելիքի օրը, ՀՀ Անկախության օրը, Ոսուցչի տոնը, Տարեցների օրը, Էրեբունի-Երևան 2799-ամյակը, Գիտության, Ուսանողության, Երիտասարդության տոները:
- ✓ «Երևանյան ամառ 2017» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ավելի քան 25 բակային միջոցառում, ինտելեկտուալ խաղ մրցույթներ, ցուցահանդեսներ, այցելություններ են կազմակերպվել Հայաստանի պատմական վայրեր, թանգարաններ, ցուցասրահներ:



2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում իրականացվել են բազմաթիվ սպորտային ծրագրեր:



- ✓ Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան, մարզատեխնիկական կենտրոն հաճախող երեխաների թիվը 292 է, Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցում՝ 373, Երևանի «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնում՝ 705, Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում՝ 197:
- ✓ Նոր Նորք վարչական շրջանում կազմակերպվել են զանգվածային, առողջարարական, մարզական ու երիտասարդական միջոցառումներ՝ ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղերը, Ազգային ժողովի գավաթի խաղարկության մրցումները, «Լավագույն մարզական ընտանիք 2017թ.» մրցույթը, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք 2017թ.» համաքաղաքային բակային ավանդական փառատոնը, 2017թ. նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը, ներշրջանային տարբեր մրցումներ, սպորտլանդիաներ:
- ✓ Նոր Նորքի մարզիկները հաջողությամբ մասնակցել են նաև միջազգային տարբեր մրցույթների. լավագույնները խրախուսվել են Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

2017 թ. քաղաքային կանաչապատման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել Նոր Նորք վարչական շրջանում:

- ✓ «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ կողմից 2017թ. վարչական շրջանում վերանորոգվել է 870 զմմ ոռոգման ցանց բակային տարածքներում, անցկացվել է 400 զմմ ոռոգման Նոր ցանց:
- ✓ Ստեղծվել է 25150 քմ սիզամարգ:
- ✓ Տնկվել է 217730 ծաղիկ:



ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈՒԽԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

- ✓ ՀԵՑ ՓԲԸ-ի հետ համագործակցության արդյունքում կատարվել են բազմաբնակարան շենքերի 9 մուտքերի 1260 գծմ էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքներ:
- ✓ Վեոլիա Զուր ՓԲԸ-ի հետ համագործակցության արդյունքում իրականացվել են կոյուղատար համակարգի 168 գծմ և 50 դիտահորերի վերանորոգման և ջրատար համակարգի 105 գծմ վերանորոգման աշխատանքներ:
- ✓ Վերակառուցվել են Մամիկոնյան 17ա հասցեի ջրատար և կոյուղատար համակարգերը:



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

2017 թ. իրականացվել են արտաքին լուսավորության ցանցի անցկացման աշխատանքներ:

- ✓ Վարչական շրջանի արտաքին լուսավորության ցանցը բարելավվել է «Երքաղլույս» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում:
- ✓ Անցկացվել է 5875 գծմ երկարությամբ լուսավորության նոր ցանց՝ 151 լուսակետով:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. Նոր Նորք վարչական շրջանում զգալի աշխատանքներ են իրականացվել արտաքին կապերի զարգացման ուղղությամբ:

- ✓ 2017թ. հունիսի 8-ին Երևանի Նոր Նորք վարչական շրջանի և Ավստրալիայի Սիդնեյի Վիլբրիի շրջանի միջև ստորագրվել է համագործակցության վերաբերյալ համաձայնագիր փորձի փոխանակման և ձևավորված համագործակցության զարգացման նպատակով:
- ✓ Նոր Նորք վարչական շրջանում հաջողությամբ իրականացվել է «Արի տուն-2017» ծրագիրը:
- ✓ «Էրեբունի-Երևան-2799» տոնակատարություններին մասնակցելու նպատակով Նոր Նորք վարչական շրջանը հյուրընկալել է Նովոսիբիրսկ և Խարկով քաղաքների պատվիրակություններին:
- ✓ Արտաքին կապերի ընդլայնման նպատակով կազմակերպվել են աշխատանքային կարևոր հանդիպումներ և քննարկումներ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:





**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-688
nor_norq@yerevan.am

